# ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԳՈՐԾԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ

Հայաստանի Հանրապետության Կառավարություն

## 3 ՏԱՐՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ ԿՈՒՆԵՆԱՆ ՀՀ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ ՈՒ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԸ

### ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԸՆԴԳՐԿՎԵՆ

- Մինչև 18 տարեկան երեխաները
- 65 + տարիքի քաղաքացիները
- Հաշմանդամության 1-ից 3-րդ խումբ ունեցող քաղաքացիները, ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին սահմանափակում ունեցող անձինք
- Սոցիալապես անապահով խմբերը և սոցիալական աջակցության համակարգում ներառված անձինք, այդ թվում՝ զոհված զինծառայողների ընտանիքները
- 200 001 դրամ և ավելի աշխատավարձ ստացողները
- 2 400 001 դրամ և ավելի համախառն եկամուտ ունեցող ԱՁ-ներն ու նոտարները

### ՍՈՑՓԱԹԵԹԻ ԱՅՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ 200 001 ԴՐԱՄ ԵՎ ԱՎԵԼԻ Է

Նրանց ապահովագրավճարը կփոխհատուցվի «Զինապահ» հիմնադրամին հատկացվող 5500 դրամից՝ Ապահովագրության հիմնադրամին ուղղվող 4500 դրամով, ինչպես նաև կարող են իրենց սոցփաթեթի գումարը (ամսական 6000 դրամ) ուղղել ապահովագրավճարին

### 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԽՄԲԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԿՓՈԽՀԱՏՈՒՑՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ

- Մինչև 18 տարեկան երեխաներ
- 65 + տարիքի քաղաքացիներ
- Հաշմանդամության 1-ից 3-րդ խումբ ունեցող քաղաքացիներ, ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին սահմանափակում ունեցող անձինք
- Սոցիալապես անապահով խմբեր և սոցիալական աջակցության համակարգում ներառված անձինք, այդ թվում՝ զոհված զինծառայողների ընտանիքներ

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ԱՐԺԵՔԸ

**ՏԱՐԵԿԱՆ՝ 129 600 ԴՐԱՄ**

**ԱՄՍԱԿԱՆ՝ 10 800 ԴՐԱՄ**

### ՍՈՑՓԱԹԵԹԻ ԱՅՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ 200 000 ԴՐԱՄ Է ԵՎ ՊԱԿԱՍ

Նրանք կշարունակեն սպասարկվել սոցփաթեթի շրջանակում

### 200 001 ԴՐԱՄԻՑ ՄԻՆՉԵՎ 500 000 ԴՐԱՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՍՏԱՑՈՂՆԵՐԸ ԿՎՃԱՐԵՆ ԱՄՍԱԿԱՆ 300 ԴՐԱՄ

«Զինապահ» հիմնադրամին հատկացվող 5500 դրամից 4500 դրամն ուղղվելու է Ապահովագրության հիմնադրամին, 6000 դրամը կփոխհատուցվի պետության կողմից. այս խմբի քաղաքացիները կվճարեն ամսական 300 դրամ

### 500 001 ԴՐԱՄԻՑ ՄԻՆՉԵՎ 1 000 000 ԴՐԱՄ ՍՏԱՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

«Զինապահ» հիմնադրամին հատկացվող 8500 դրամից 7500 դրամն ուղղվելու է Ապահովագրության հիմնադրամին, մնացած 3300 դրամը պահվելու է աշխատավարձից, սակայն ֆիզիկական անձանց հայտարարագրման համակարգով, որպես եկամտահարկի վերադարձ, այն կարող են հետ ստանալ 2027 թվականին

### ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱԽՏՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ՍՔՐԻՆԻՆԳՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ԿԼԻՆԵՆ

«Արմեդ» հավելվածում, Առողջապահության նախարարության և Առողջության ապահովագրության հիմնադրամի պաշտոնական կայքերում

www.moh.am

Ապահովագրությամբ բուժծառայություն ստանալու գործընթացը սկսելու է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակից, եթե շտապ և անհետաձգելի բուժօգնություն չէ